# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը |
| 13 | Ինտերսեն պլյուս | Ամիքսան | <<Ամիքսան խտանյութ, 1լ >>: Որպես ազդող նյութ պարունակում է Ն,Ն–բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին (3%), ալկիլդիմեթիլբենզիլամոնիում և ալկիլդիմեթիլէթիլբենզիլամոնիումի քլորիդներ (25%), կոռոզիայի ընկճիչ և այլ բաղադրիչներ:Ախտահանիչ միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ տարբեր գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում տուբերկուլոզի և ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, Կանդիդա սնկերի, վիրուսների, նկատմամբ, օժտված է նաև լվացող հատկությամբ: Պիտանելիության ժամկետը արտադրողի փակ տարայում պահելու պայմանում 3 տարի է, աշխատանքային լուծույթինը՝ 14 օր: Ախտահանումից հետո միջոցի աշխատանքային լուծույթը մակերեսների վրայից լվանալու անհրաժեշտություն չկա: 1 լիտր խտանյութից ստացվում է 0,25 %-անոց աշխատանքային լուծույթ, որը չի առաջացնում մետաղների ժանգոտում, չի փչացնում մշակվող մակերեսները, չի գունաթափում գործվածքները՝ 15 րոպե պահաժամով ախտահանումից հետո: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Նախատեսված է բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում՝ պտտվող բժշկական նշանակության իրեր, ճկուն և կոշտ էնդոսկոպներ) ախտահանման և նախամանրէազերծման մշակման համար, այդ թվում՝ համակցված մեկ գործընթացում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում , այդ թվում՝ մանկական և նեոնատոլոգիական բաժանմունքներում, վարակիչ հիվանդությունների օջախներում սենքերի, կոշտ գույքի, կահավորանքի պարագաների մակերեսների, սարքերի և սարքավորումների, սանիտարա-տեխնիկական սարքավորումների մակերեսների, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում՝ լաբորատոր), հիվանդի խնամքի պարագաների, մաքրման պարագաների, խաղալիքների, կոշկեղենի, ռետինե գորգերի, սանիտարական փոխադրամիջոցի ախտահանման և լվացման համար մանրէային ծագումնաբանությամբ վարակների ժամանակ: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 10 հունիսի 2016թ., թիվ 1791-Ա: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | технические характеристики |
| 13 | | | |